ԵՐԵՎԱՆՍՈՎԵՏԻ ԳՈՐԾԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ.

Երևանի կենտրոնական մասի լիակատար քարեկարգման համար նշանակալից է Հյուսիսային պողոտայի պրոբլեմի վերջնական լուծումը: Խոսքը վերաբերում է այն տարածության Ճարտարապետական լուծմանը, որն ընկած է Լենինի հրապարակի և Պատանդարանի միջև: Տարիներ ի վեր նախագծեր են մշակվում որոշ նախագծային ինստիտուտներում, սակայն անհրաժեշտ արդյունքի դեռ չեն հասել: Տվյալ հարցը հետաքրքրում է ոչ միայն այդ ինստիտուտների նախագծողներին, այլ և ամենքին:

Այժմ Ձեզ ներկայացվող նախագծային տարբերակը, թերևս Օժտված է առավել քարեմասնություններով, քան նախորդ տարիներում մշակված նախագծերն ու նրան տարբերակներն ընդհանրապես:

Բանն այն է, որ մենք բարեբախտություն ունենք ,,հանկարծ նկատելու,, որ մեր միլիոնանոց մայրաքաղաքի կենտրոնում՝ Աբովյան, Թումանյան, Տերյան և Պատանդարյան փողոցների միջև չկառուցապատված մի զգալի տարածություն ունենք որ կարող ենք ամբողջապես կանաչապատել, ինչպես այդ ցույց է տրված ստորև բերվող գծագրում: Դա հրաշքի նման մի բան է, բայց իրական: Մեր ոսոնի քաղաքի կենտրոնում 5-6 հեկտար տարածությամբ չմասնատված կանաչ տարածության ստեղծումը անգնահատելի կլինի ռեգիոնի միկրոկլիմայի քարելավման առումով, ինչպես և կդառնա մեր քաղաքի ամենամեծ հարստություններից մեկը: Մի այլ դեպքում հազիվ չպիտի լիներ նման իրավիճակ ստեղծել:

Այժմ այդ տարածությունը կառուցապատել, ինչպես տեսնում ենք այլ և այլ նախագծերում, հավասարազոր է...անուղղելի մեղք գործելուն:

Կուզենայի այս հարցը Ձեր ներկայացմամբ լայն քննարկման արժանանար, որ առանձին մասնագետների կարծիքների սուբյեկտիվ բնույթը հնարավոր խնդրի Օբյեկտիվորեն դրական լուծմանը:

Հարգանքներով՝ / Տ.Մարության/

2-մարտի, 1982 թ.
ք. Երևան

/,,Հայհիդրոնախագիծ,, ինստիտուտ
գլխավոր Ճարտարապետ, Ճարտարապետության թեկնածու, Հայկ. ՍՍՀ
տակավոր Ճարտարապետ.
Երևան 9, Մոսկովյան 8, բն. 3
Հեռ. 56 08 33, 53 01 23

2/03-82
58.0376





Գծ. 1-2 - Հյուսիսային պողոտայի փարբերակներ (հեղ.՝ Տ. Մարության)